Ընթացիկ տարվա նոյեմբերի 27-30-ը , Վրաստանի Պատրիարքության Սուրբ Անդրեյ Նախակոչի անվան վրացական համալսարանի նախաձեռնությամբ, ռեկտոր Սերգո Վարդոսանիձե, «Քաղաքակրթությունների երկխոսություն» նախագծի շրջանակներում, անցկացվեց վրաց-իրանական II միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի նպատակն էր ուղղափառության և իսլամի արժեքների վերլուծությունը, Վրաստանում գոյություն ունեցող դավանանքների իրավիճակի քննարկումը: Գիտաժողովին իր մասնակցությունն էր բերել Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմը՝ առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի գլխավորությամբ:

Բարձր գնահատելով գիտաժողովի նպատակը՝ գիտաժողովի աշխատանքին օրհնության և բարեմաղթանքի խոսք ասաց Վիրահայոց Թեմի Առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Նա կարևորեց այն հանդուրժողական ոգին ու շունչը, որը ստեղծված է Վրաստանում գործող տարբեր դավանանքների համար իրենց Աստվածահաճո գործունեությունը ծավալելու նպատակով: